Արձանագրություն 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.11.2018թ. ժամը 12:30-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան – ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

Ա. Մարտիրոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի պետ

Մ. Միքաելյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Սիրունյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի տնտեսվար

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման վերաբերյալ

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացության համաձայն՝ «Ա/Ձ Վահագն Սարգսյան»-ի կողմից ներկայացված տվյալները չեն համապատասխանել իրականությանը՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ մասնակիցը ներկայացրել է 40000 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 12000 ՀՀ դրամի չափով):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Ա/Ձ Վահագն Սարգսյան»-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ստեփրիկ» ՍՊԸ-ին:

3. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ստեփրիկ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Մ. Սարգսյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Է. Պողոսյան
	_____	Ա. Մարտիրոսյան
	_____	Մ. Միքաելյան
	_____	Կ. Սիրունյան
Գնումները համակարգող ՝	_____	Ա. Աղաբաբյան